

տի կորսնցներն առանց վարժարանի
Յունաց թրաքա լրագիրն այս առ-
թիւ ըրած գառն խորհրդածութիւ-
նը կառարանէ ըսելով թէ Յունաց ե-
կեղեցւոյն ներկայ տխուր վիճակին
պատճառը բարձրաստիճան կղերին
ընչաքաղցութիւնն եղած է :

Կորնոյ դաւառւին կուսակալ Ահ-
մէա Մուխթար փաշան շարաթ օրը
Տրապիզոնի չորհրդածութիւնը
մայրաքաղաքէն :

Ն. Վսեմութիւնը մեկնելէն երկու
օր առաջ փոխադարձ այցելութեան
եկաւ մեր Ս. Պատրիարքին :

Ուղղունձովայէն լուր կուսան թէ
այս տարի անցեալ տարիներէն աւելի
վաճառք տարւած է տօնավաճառին
համար, բայց դժբաղդաբար ստակի
նուազութեան պատճառաւ մեծ ա-
ռուտութիւնը չկան, և եղածներուն
ալ շատերն ապառիկ են : Այս տար-
ւան վաճառաց արէքքը մէկ միլիոն
լիւրայէն աւելի կը հաշուեն :

Շարաթ առաւօտ Ղալաթիոյ Պոր-
տային բացուած ժամանակ կառա-
վարութեան հեռագրէն զատ ուրիշ
հեռագիր հասած չըլլալով և կառա-
վարութեան հեռագիրն ալ փարիզի
Պորտային փակման գինը 48,25 ֆր.
նշանակած ըլլալով, ֆոնտիլտէն մինչև
52,8 ելաւ, բայց ի՞նչ ժամ ետքն ու-
րիշ հեռագրերէ հասկցուելով որ
փարիզի Պորտային փակման գինը 47,
50 էր, կառավարութեան հեռագրին
փոստհանգով դարձ ընդունելը կորստին :

Ասոր վրայ, լսածնուս նայելով,
բողոք և խնդիր մատուցուեց է կու-
սակարութեան որ այսպիսի սխալ-
ման մը վերաբերին չորոգութեան հա-
մար արժան եղածը անօրինակ :

Կայսերական կառավարութիւնը
տէրութեան զինուորական դպրոցնե-
րուն պէտք եղած գրքերը թուրքե-
րեն լեզուաւ շարագրելու ձեռնար-
կութիւնները քաջալերելու համար
կանոնադրութիւն մը հրատարակեց,
որոյ մէջ յիշեալ գրքերուն շարագ-
րութեան կամ թարգմանութեան պայ-
մանները ցոյց տրուելէ զատ՝ հեղի-
նակաց կամ թարգմանչաց ստանալիք
վարձքն ալ նշանակուած է :

Երեք կարգի բաժնուած են շա-
րագրութիւնը կամ թարգմանութիւնը
գրքերը. առաջին կարգին վերաբեր-
եալ գրոց հեղինակ կամ թարգմա-
նիչները 250—300 լիւր վարձք և չոր-
րորդ կարգի Օսմանիէ պատմական
պիտի ստանան : Երկրորդ կարգի գրքե-
րուն հեղինակ կամ թարգմանիչներն
150—200 լիւր վարձք և չորրորդ կար-
գի Մէճիտիէ պիտի ստանան : Իսկ
երրորդ կարգիները 75—100 լիւր :

Այս երեք կարգի գրքերը ահ-
բուժեան մանքով պիտի տպուին,
և հեղինակ կամ թարգմանիչներն ալ
վերջիջեալ վարձքն ստանալէ ետեւ՝
սեփականութեան իրաւունք չպիտի
ունենան այն գրքերուն վրայ :

Այն անձինք՝ որք արդէն գտնը-
ւած թուրքերէն ուսումնական գիրք
մը կարեւոր լաւելուածներով և օրը-
բագրութիւններով կատարելագոր-
ծեն, երրորդ կարգի վարձատրութիւն
պիտի ստանան :

Շարաթէն կիրակի յունալու գի-
շերը Գուլէ դաբուսի վաճառատան
մը վերի յարկէն հրդեհ ինկելով՝ առ-
բողջ վաճառատունն այրեցաւ :

Վառնայէն սեպտ. 17/29 թուով
կը գրեն թէ քաղաքին բանտին մէջ
փակուած 36 պատժապարտք՝ բան-

տին տակէն ճանաչող մը բանալով՝ ա-
մենն ալ փախելու են :

Փաղաքին կառավարիչը ոտակա-
նութեան հեծելազօրն առած ետեւ-
նուն ինկեր, և փախչողներուն հինգը
բռնել է : Իսկ մնացեալները լեռները
փախած ըլլալով կը փախցուի ուրա-
դէն գաշտներն ու ճանբաններն ուս-
պտակող աւաղակաց հետ միասնա-
լով՝ անոնց թիւն աւելի ստուարացը-
նեն, որովհետեւ օր չըլլար գրեթէ
օր Սիլիսթրիէ և Բաղադըզի ճան-
բաններուն վրայ և մինչեւ իսկ քա-
ղաքին շրջականերն աւաղակութիւնք
չգարծուին :

Անդղիայէն Հնդկաստան գնացող
Սիլիսթրիէն անուն չորհրդածութիւն
զեւորներէն մին հետեւեալ կը գրէ
անդղիական լրագրի մը :

Մայիս 10ին օրը իրիկուան դէմ,
երեսը կալլի հրուանդանը գառնալով
դէպի Մատրաս կերթայինք, երկիւյսմ
կոյէթ նաւ մը տեսանք մեր չորհրդա-
ւէն քանի մը մշտն հեռու անշարժ
կեցած : Կոյէթին մօտն ալ շուրին ե-
րեսը երկայն կոյս մը տեսանք, զոր
ծովային մօմուդ գէղ մը կարծե-
ցինք, բայց յանկարծ այդ ահագին
կոյսը շարժելով գնաց կոյէթին զար-
նուեցաւ : Կոյէթը մէկէն վեր բարձ-
րացաւ և անմիջապէս գլխաւ կող-
մէն ընկղմելով քանի մը վայրկեան մէջ
ծովափը եղաւ : Իսկոյն մեր չորհ-
դենաւը հոն հասնելով՝ չորս մարդ
ժողովեցինք ծովուն մէջէն :

Ահաւստիկ նաւապետին ըրած
պատմութիւնը :

«Երբոր կալլի հրուանդանը տես-
նելով առագաստները կամփոփէինք,
յանկարծ ծովուն երեսը թխագոյն
կոյս մը տեսանք, մեր նաւէն երկայն,
որ կը շարժէր ծովուն մէջ, և հեռու-
էն անհետ թէ Պալէնա մը կարծեցինք,
դնայի հրացաններէ, և երբոր վը-
րան պարպելու վրայ էի, թէր-Նէօլ-
ցի նաւատակ մ'ըստ ինձ. «Չգուշա-
ցիր, տէր, եթէ փնտ մ'ընէք իրեն,
մեղ կընկղմէ :

«Եւ մտեցայ նաւատակին այս
խօսքին վրայ և հրոյանս պարպեցի,
իսկոյն մեծ շարժում մ'ըլաւ ծովուն
մէջ :

«Տապարները ձեռք տալէ քան
քրդ ալ ոյսուց թէր-Նէօլցի նա-
ւատակն, նաւուն դպած կողմէն դար-
կէք, լաւ ուղադրութիւն ըրէք, և
տեղը պահէ մեզ : »

«Երբոր մարդիկ տապարներն
առնելու վրայ էին, հրէշը մօտենալ
հատեր էր, երկայնաձեւ կենդանի մէր,
որ ոտատակով յառաջ կուգար ջու-
րին տակէն : Մարմնոյն լայնքը մեր
նաւուն լայնքին չափ էր, և երկայ-
նութիւնն ալ մեր նաւուն կէսին չափ,
բայց տաւուն մ'ունէր, որոյ երկայ-
նութիւնը հարիւր սոր կար Գրեյուս
չափ չաւեց, այս ոտակալութեամբ մարմ-
նէն բաղմաթիւ թեւեր գուրս ցըց-
ւելով նաւս բռնեցին, զարհուրելի
ճարձատմամբ վեր հանեցին, վայրկե-
ան մ'ըստը հրէշը նաւուն մէջն էր
գլխու կողմէն, և նաւս այն ահագին
չեղջիկութեան ծանրութեամբ չգլխա-
նալով իսկոյն ծովափը եղաւ : Մար-
դոյմէն երկուքն հրէշին երկայն ճան-
կերուն ներքեւ ջախջախեցան, երրոր-
դը չեմ գիտեր ինչ եղաւ, և չորս
աղատեցանք : »

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅՈՒՆ	
ԵՍԶԱՄԵՐ ՈՒՄՈՒՄԻՆ	
23 սեպտ. երկուշաբթի իրիկուն	51,40
24 » երեքշաբթի առաւօտ	
բացուեցաւ	30 20
կէս օր	50 30
Կ. Պոլս 23 սեպտ.	
Սօսիթէ ժէնէրալի բաժինը Անդղի-	

7 32

« Փոխանակութեան »		5
Կ. Պոլսոյ Պանքային »		5,37
Ֆրէտի ժէնէրալ »		11 30
Ֆրէտի Օսթրո-թիւրք		—
Երկաթուղեաց հին	Ֆր.	124 1/2
նոր		—
Փոխ. 4863		343
» 4865		346
» 4869		290
» 4872		84 1/2
» 4873		270
Թրամուէյ	Օսմ. լիւր	5

ԲԱՅԱՑԻ ԳՐԱՐԱՆ	
23 ՍԵՊՏԵՄԲԵՐ	
Անդղ. լրագ. դարձաւ	409,44
Հաւաքուած օտար	87 1/4
Կարգաւոր Ռուս »	89 20
Գ. Կրքից »	51,20
Հնգ. ֆրանք »	—
Հինգնոց »	404 10
Պլինձ »	427 30

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Գոհութեամբ կը լսենք թէ Կրօ-
նական ժողովը վերջապէս եկեղեցա-
կանաց ոմանց նկատմամբ վերջին ժա-
մանակներս հրապարակին մէջ տա-
րածուած գայթակղութիւնները նը-
կատողութեան առնելով, ընդհանուր
բարեկարգութեան օրէնք մը սահ-
մանելու ձեռնարկէր է, գործն ի հի-
մանց ուղղելու մտադրութեամբ, այ-
սինքն եկեղեցական այլ և այլ աստի-
ճանաց նկատմամբ անհրաժեշտ պայ-
մաններ ու հանգամանքներ որոշե-
լով, որոշէր զի այսուհետեւ քահա-
նայ, վարդապետ կամ եպիսկոպոս
ըլլալ ուղղով անձինք առանց այն պայ-
մաններուն և հանգամանաց չկրնան
ներկայանալ ի ձեռնադրութեան :

Կրօնական ժողովը Ս. Հարք այս
եկեղեցաշէնարար գործն ի գլուխ
հանելու համար մեծ գիւտարութիւն
մը չունին իրենց առջեւ՝ բացի դժ-
կամակութենէ, որովհետեւ առաքե-
լական և հայրապետական սահմա-
նադրութիւնք այս մասին բան մը
պակաս չեն թողած, մասնաւորապէս
Շնորհալիին Բնագործարարին և Հա-
յատանեաց եկեղեցւոյ Մայր Մոշ-
տացը որ այն սահմանադրութեանց
ամենէն կարեւոր և անհրաժեշտ կա-
նոնները կը բովանդակեն :

Օրինակի համար, ինչ հոնդա-
մանք կամ պայմանք կը պահանջուին
քահանայացուէ մը, ինչ կը պահանջ-
ուին վարդապետացուէ մը, ինչ կը
պահանջուին եպիսկոպոսացուէ մը,
ամենն ալ կը գտնուին անոնց մէջ :
Նմանապէս այս առաքաններն ոտա-
ցողաց թէ՛ վարդապետ, թէ՛ կենցաղա-
վարութեանց, թէ՛ պաշտամանց եւ
թէ՛ պարտականութեանց սահմաննե-
րն ալ որոշապէս գծուած են, այն-
պէս որ Կրօնական ժողովին ուրիշ
բան չմնար ընելիք, բայց միայն զա-
նանք քաղելով գլուխներու և յօդ-
ւածներու բաժնել և գործադրու-
թիւնը վճել :

Ըստ մեզ՝ եկեղեցական սահմա-
նադրութեանց ներկայիս մէջ ամե-
նէն աւելի բարձր թողի եղած մա-
սերն են՝ քահանայացուներէ պա-
հանջուած բարոյական և կրթական
հանգամանքներն, առանց որոց քա-
հանայական աղին և սուրբ պաշտօ-
նըն իր կոչմանը չկրնալով պատաս-
խանել, ներկայ տխուր վիճակին հա-
սած է : Փոխանակ ժողովը քահանա-
բոյական զարգացմանն առաջնորդը
լալու, փոխանակ անոր վշտակու-
թեանց և առաքալանաց մէջ միս-
թարար և սխալիչ ըլլալու, փոխանակ
անմեղին պաշտպան, տկարին ձեռն-
կալու, մորթելոյն ուղղիչ ըլլալու, մէկ
խօսքով, փոխանակ ժողովը որոց բա-
րեկրթութեան, աղնութեան, ա-
ռաքանութեան օրինակ մ'ըլլալու,
պատկառելի և անձնուէր հայր ըլ-
լալու, դժբաղդաբար մեծ մասամբ
ողբալով եմք, անկրթութեան, թու-

լահաւատուլ	ահա.
սիրութեան	Հա.
բուստին և	տը.
կարին ոտնհ.	ընչ.
ամեն գծուծ	ըհող
ողորմելի անձինք,	չողորմեան
սրտին մէջ կրօնի և բարոյականի ըղ-	
գացմանց տկարանալուն պատճառ	
կըլլան :	

Կրօնական ժողովը պարտքն է
եկեղեցւոյ այս ամենակարեւոր պաշ-
տօնէից գլուխն ու վիճակն աղնուա-
ցնելու և իրենց կոչման պատասխա-
նել տարու համար հարկ եղած կա-
նոնները զորս եկեղեցւոյ նախնի Ս.
Հարք իմաստուն նախատեսութեամբ
սահմանել են, վերահաստատել և
ճշգրտութեամբ գործադրել, եթէ կու-
ղէ անկեղծաբար Հայաստանեայց ե-
կեղեցին բարեկարգել պայծառացը-
նել և անոր միջոցաւ աղբն ի բա-
րոյականութիւն առաջնորդել :

Կուսակրօն քահանայից կամ վար-
դապետաց նկատմամբ, մեր նախնի Ս.
Հարք սահմանած կանոններն ալ խիստ
պարզ և բացօթյա են : Ասոնք ժողովը-
դոց հետ գրեթէ բնաւ գործ չունին
իրենց բնակարանները վանքերն են .
քաղաքաց մէջ բնակութիւն և մանա-
ւանդ բնտանեաց հետ յարաբերու-
թիւնք նշուիւք արդիւնեալ են ասոնց :
Ասկէց զատ՝ նախնի Ս. Հարք կուսա-
կրօն քահանայից համար տարիքի
պայմաններ գրած են, ինչպէս նաեւ
եպիսկոպոսաց համար Այս պայման-
ներն հիմա բարբոսին անտես եղած
են 20—22 տարեկան երիտասարդք՝
կուսակրօն քահանայ կամ վարդա-
պետ ձեռնադրուելով քաղաքաց մէջ
թող կը արուին սանձարձակ, տու-
ներու և բնտանեաց մէջ կը նստին
կենսն, և կ'սպասուի որ երիտասար-
դական բոցեւանդ կրի թափին դի-
մանան, մարդկօրէն տկարութեան
մէջ չկենան և զայնթաղութիւն չարա-
ճառեն : Թերեւս խիստ քիչեր կարե-
նան այդ հրեշտակային ժառկալու-
թիւնն ունենալ, բայց ամեն բնու-
թեան համար յուսով է : Մեր նախ-
նիքն այս հակաբնական փորձերուն
գիտարութիւնը ճանչելով, կուսակր-
օն կամ ամուրի եկեղեցականաց՝ վան-
քերը բնակարան սահմանած են, և
միայն ծերունի վարդապետաց և ե-
պիսկոպոսաց արտօնութիւն տուած
են քաղաքաց մէջ առաջնորդական
պաշտօն վարել՝ եկեղեցեաց խուցե-
րը կամ ամենաշնորհարարները բնա-
կարան ցուցնելով, և դարձեալ բնտան-
եաց հետ յարաբերութիւնն արդեւ-
լով :

Լսածնուս նայելով, Կրօնական ժո-
ղովը Ս. Հայրերէն ոմանք՝ մեր նախ-
նի Ս. Հարք սահմանած տարիքի պայ-
մանները թեթեւցնել կուզեն եղեր
վարդապետացուաց և եպիսկոպո-
սացուաց համար, օրինակ ցուցնելով
Ս. Գրիգոր տղայ կաթողիկոսն և ու-
րիշ քանի մը նախնի Ս. Հայրեր. բայց
ասոնք քանի մ'անդուգական բացա-
ռութիւններ են, և բացառութիւնն
ընդհ. կանոն չկրնար ըլլալ երբեք :

Թող ներքէ մեզ գլխաւ Կրօնական
պատկառելի ժողովը, թէ այդ տա-
րիքի պայմանը կենսական կարեւո-
րութիւն մ'ունի Հայաստանեայց ե-
կեղեցւոյ սահմանադրութեան մէջ, և
ինքը կարող չէ վերջին ժամանա-
կաց զեղծումը կանոնի կարգ անցու-
նելով մեր նախնի Ս. Հարք հաստա-
տած կանոնը պաշտօնապէս աւերել
կամ փոխել :

Եթէ վարդապետները քաղաք-
ներէն վանքերը չպիտի կրնան փո-
խադրուիլ, եթէ մեր նախնեաց կը-
րօնաւորական կամ վանական դրու-
թիւնը ներկայ ժամանակիս մէջ գոր-

ծագելով անհնարին է, տարիքի պայմանն ու միայն չկրնար թեթեւալ, այլ մեծաւանդ աւելի ծանրանալ հարկ կըլայ:

Կրօնական ժողովը եթէ իրօք եկեղեցականութեան պատուոյն և հասարակաց բարոյականին տպահովութեան նորանաւանդելը է, եթէ ըստուգիւ եկեղեցականաց բարեկարգութեանը կը միափայլի, նախնի Ս. Հարց հաստատած կանոնը պէտք է գործադրէ, ապա թէ ոչ թող ներքէ մեզ ըսել, իր ձեռնարկութիւնն ոչ թէ բարեկարգութիւնն այլ զեղծմանց նուիրադործութիւնն եղած կըլայ, և այս ալ ոչ մի կրօնասէր և ողջամիտ Հայ չկրնար ընդունիլ:

ՀԱՍՏԱՐԱԿԱՅ ԿԱՐԾԻՐ:

Ընդհանրապէս ամեն լրագիր տարի է՝ ազգային խնդրոյ մը վիճաբանութեան ժամանակ հասարակաց կարծիք վերականգնել և իր դատն անոր մեծոյն յանձնել: Կան նաև լրագիրներ որ ընթերցողին առջև բարոյական կշիռ մը ստանալու և գրածին նպատակաւոր դոյն մը տալու համար կ'աւարձին որ հասարակաց կարծեաց թարգման են: Եթէ իստուգով շատ անգամ հասարակաց կարծիքն իբրև դատաւոր և վկայ կը կոչենք, առանց ժրնաւորութեան թէ ինչ է այդ տատանն և ո՞ր կը գտնուի այդ հեղինակութիւնն: Եթէ մեր լրագիրութեան այլ և այլ դոյններն և մեր հասարակութեան մտաւորական և բարոյական վիճակը քննենք՝ պիտի հետեւցնենք որ ոչ այդ տատանը կայ մեր մէջ և ոչ այդ հեղինակութիւնը, այլ պարզապէս կուտակցութիւններ՝ որոց իւրաքանչիւրն իրեն յատուկ շահը, նըպատակը, գործին ու բերանն ունի, և ժողովուրդ մը որ տակաւին բուն իսկ ազգային կենսական խնդիրներու մասին որոշ սկզբունք մը, կարծիք մը չունի:

Կարելի չէ ըմբռնել որ հասարակաց կարծիքը ըստաճող գոյութիւն ունենայ մեր մէջ, և յանուն այս կարծեաց ամեն օր ամեն տեսակ ստուծութիւններ, զրպարտութիւններ, անհոգի սկզբունքներ թափին հըրապարակը: Ընդունիլ որ հասարակաց կարծիք կայ մեր մէջ՝ ընդունիլ է որ հայք ըստ մեծի մասին ամենէն ստախօս, ամենէն անպատկառ, ամենէն գիւրազաւան, ամենէն անբարոյական, ամենէն տգէտ ժողովուրդըն են ժողովուրդ մէջ, քանի որ թոյլ կ'տան որ ճշմարտութեան, արդարութեան, ազգային նուիրական շահուց դէմ, իրերու դէմ, մարդերու դէմ՝ իրական ոճիրներ գործուն, ճարակ ու քաջաբեր գտնեն իր ծոյր:

Ուրեմն ինչպէս կ'յանդգնին լրագիրքը ամանք անդադար հասարակաց տեսնին վերականգնել, ինչպէս անոր թարգման ձև տեսլու կենն: Ասոր պատճառը պարզ է: Այս տեսակ լրագիր մ'իրեն մասնաւոր չըլնան ունի, ուր կրնանք չոչնչել ու կը սնանի: այս շրջանն իր աշխարհն է, հետեւապէս անոր մանր մանր շահերն ու անհնաւորութիւններն որ նիւթապէս իր շահուց կը համապատասխանեն, իրեն համար կենսական կարևորութիւն կ'տանան: այնպէս որ երբ բան մը գրէ, լուր մը հարդրէ, առաջարկութիւն մը կամ խորհրդածութիւն մ'ընէ՝ թէ և ազգամիտ, անհիմն, երբ զրպարտէ, հայհոյէ, կ'կարծէ թէ բոլոր ժողովուրդն իր և իրեն շրջանի մարդոց պէս գրածը կ'հաւատայ, կ'տորհի, կ'բատէ, կ'զրպարտէ ու կ'հայհոյէ, ուստի և այս իր կարծիքն իբրև հասարակաց կարծիք իր հե-

ռաւոր ընթերցողներուն կը ծախէ: Իսկ այն մէկ քանի լրագիր լրագիրներն որ անկեղծօրէն հասարակաց կարծեաց դիմելու մտքն կը վարձեն և անոր ներդրածութեան կ'հաւատն, ինական մըման մը կ'հետնին, եւրօպական լուսամիտ ժողովուրդեան մը վրայ մերկնր կ'դատեն, վստիք ընդհանուր ունենցողներու կողմէ ուղղափառութեան, արդարաւորութեան և հանրական շահուց գիտակցութիւնն կ'ենթադրեն:

Արդ՝ այս ենթադրութիւնը հիմնաւոր է թէ ոչ, պարզելու պիտի ջանանք:

* * *

Ինչ է հասարակաց կարծիք: Հանրական շահուց նշանակն է, ժողովուրդեան մը խելոյքը, դատողութիւնն է որ այս կամ այն խնդրոյ վրայ վճիռ կարծակէ: Այս վճիռն այնքան ուղիղ և օրինաւոր է՝ որչափ որ խելոյքն ու միտքը լուսաւոր և արդար են: Ազատ մտնող տէր և բարեկիրթ ժողովուրդեան մը մէջ հասարակաց կարծիքը բարոյական օրէնք մ'է, որ երբ չհնչուի, կը ներգործէ ոչ միայն անգղայ և անտիր անձերու վրայ այլև կառավարութեանց վրայ, և ամեն տեսակ խելոյքները կուղղէ: Կրթութիւն, բայց հասարակաց կարծիքը դոյնաւոր համար այլ և ոչ պայմաններ կան: Այս պայմաններն են բարոյական դժացումը, իրաւանց և պարտուց ճանաչումը, ճշմարտին ու գեղեցիկին սէրը, զոր դատաւարականութիւնը կրնայ աւել, ուղիղ դատողութիւն, ազգային գործոց ճշգրիտ հմտութիւն, վիճաբանութեան մէջ անկեղծութիւն, և այս ամենուն միջոցն ու պատկն օրինաւոր ազատութիւն: Ժողովուրդ մը՝ որ այս հանգամանքէն զուրկ է, ժողովուրդ մը՝ որ բարին չարին հետ կը շփոթէ, իր բարոյական զգացողութիւնը խառն գարուած է, իր ազգային իսկական շահուց անտեսելի է, ժողովուրդ մը՝ որ այս պատճառներով սնտոի, ազատեղի և անձնական բանաւորութեան տեղի տալով կ'զգայ և սիրա ու միտքը զարգացնող միջոցները կը մերժէ, այսպիսի ժողովուրդ մը չէ կարող մեր սոհմանած հասարակաց կարծիքն ունենալ կամ ունենալու վիճակին մէջ գտնուիլ:

Արդ՝ հայ ժողովուրդն և ի մասնաւորի Կ. Պոլսոյ ժողովուրդն ունի՞ այն բարոյական և մտաւորական պայմաններն որով հասարակաց կարծիք կը կազմուի: Մենք կը քննենք թէ չունի: Բաւական է միայն հասարակաց կարծեաց յայտարար նշանները քննել: Այս նշաններն են մամուլն ու քուէն: Հայ լրագիրութեան վիճակն արդէն ամենուն յայտնի է, և եթէ զայն իբրև ազգային կերպարանը ներկայացնող հայր մը նկատենք՝ պէտք է ըսել որ շատ տղեղ և նողկալի է այդ կերպարանը: Եթէ հայրն անկեղծ չէ, ժողովուրդն ալ շատ անաւորներ է որ դէմքն անոր մէջ կը նայի, և ի վերջէ այս տղեղութիւնն իբրև բռնական տիպար ընդունելու պիտի վարժի: Լրագիրութիւնն իր պարտքը չկատարեր մեր մէջ, վստիք չի պարտքը չճանչեր ըստ մեծի մասին: Իր ազատութեան սահմանին մէջ կարող է չինել հասարակաց կարծիքը: սակայն այս ազատութիւնը ժողովուրդեան յոռի կրկն յագուրդ տալու, անձնականութիւններ վիրաւորելու, վատաբանութեան կը գործածէ, փոխանակ սկզբունքի հաստատութիւն, արդարաւորութիւն և հայրենասիրական ոգի ցոյց տալու: Ազգային իրաւ սկզբնական խնդիրներու մասին իսկ կը բաժնաւոր մեր քանի մը

նշանաւոր լրագիրներն և բնորոշ իրարու հակառակ շահուց կը ծառայեն: Ինչ որ՝ օրինակի համար՝ մին օգտակար կը համարի ազգին՝ միւսը փնտրակար կը հռչակէ, ինչ որ մին իբրև առաքինի կը գովէ, միւսը կ'ամբաստանէ իբրև մալի, այս՝ սին իբրև ճերմակ կը ներկայացնէ, այն՝ երկուքին ալ տարբեր անուն կը տալ:

Եթէ լրագիրներն (հարկաւ բացառութիւններ կան) այսպէս, ինչ են ընտրութիւնները: Միթէ հասարակաց կարծեաց հարազատ բացատրութիւններ են: Ի՞նչ, բնաւին: Վստիքն զի շատ անգլ ժողովուրդն՝ որ երբեմն իրար կանցնի երբ իր մէկ իրաւունքը վտանգեալ տեսնէ, գրեթէ բոլորովն անաւորներ կերելի երբ իր ամենէն նուիրական մէկ իրաւունքը վտանգեալ տեսնէ, գրեթէ բոլորովն անաւորներ կերելի երբ իր ամենէն նուիրական իրաւունքը գործադրելու, քուէ տալու կը հրաւիրուի: Սին ամեն առաւարեղ բայց կը մնայ ճարպիկ, շահագէտ և կըրքոտ մարդոց՝ որ ամեն օգտակար հիմնարկութիւն ի շար գործածելու հարը գիտեն, և քուէտուփն իրենց ճանկին ներքև կը ձգեն, ուսկից չէ թէ ազգին՝ այլ իրենց անձուկ զգացումներու և գաղափարներու ներկայացուցիչներ կը հանեն: Այս տեսակ պատգամաւորներ՝ իբրև երեսփոխան՝ ընդհանուր ժողովը մանաւրդ, ի հարկէ ստորին շահերու, օտար ներշնչութիւններու պաշտպան կը կանգնին և ազգին յառաջդիմութեան արգելադրած սահմաններու մագիլը տակաւութիւ երեսփոխաններու ամեն բարենպատակ խորհուրդները կը խանգարեն, ամեն ազնիւ և ազդեցութեամբ զգացումները կը խեղդեն:

Բայց ինչ որ լինի հասարակաց կարծեաց չգոյութեան պատճառն, ինչ որ ալ լինի հայ մամուլն և ընտրութիւններու ուղղութիւնն ու արդիւնքը, այս իրաւ է որ ազգին ազգեպալի վիճակը կը յայտնեն: Անհրաժեշտ է որ այս վիճակը փոխուի առանց հիմնովին փոփոխելու մեր բընաւորութիւնը, մեր կրթութեան եւ դաստիարակութեան, մեր բարքն ու վարքն, և առանց ազգային յեղափոխութիւն մը բերելու բարոյապէս և մտաւորապէս:

Աւելեւն Մ. Բ. Բ.

ՎԻՃԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ի ՆՊԱՍՏ

ՀԱՅ ՀԻՄՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԶՄԻՌՆԵՆՈՅ

ԹԻՒ ՏՈՒՍԱԿԱՆ 12000

ԳԻՆ ԻՄԲԻՆԻՆԻ 5 ՊԵՆԻ

Յերին շահող թիւն՝ այսինքն՝ Ա. Մեծ նոր տուն մը ի փոխարէն ճատաւէսի թիւ 55, լայնութիւն 16 եւ երկարութիւն 80 կանգուն, 11 սենեակով, աղբիւրով ու պարտէզով արժէք 2000 դրամով անկի: Բ. Պղտիկ թուականն է մը չորս սենեակով ի փոխարէն թիւ 9, խանութ մը ի փոխարէն թիւն:

Վիճակահանութիւնն պիտի քաշուի անհրաժեշտաբար 1875 յունվար 11/13ին ի Հայ Հիւանդանոցն:

Ամեն տոմարի որ Հիւանդանոցի վարչութեան կնիքը չկրնար, անվաւեր է:

Մեծ տունը շահող պիտի չնորհէ Հիւանդանոցին 120 դրամ, սակի բուսանէն շահողը 20 խանութը 10

Այս վիճակահանութեան տոմարներէն լրագրոյս դրամներէն ալ գանձուելով, ուղղը կրնայ լրագրոյս ցրտիչն ստանալ:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՆՈՐ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԲԵՐԱՎԱՆՈՒԹԻՒՆ

ՅՈՐԻՆԵԱՅ Ա. Ա. ՍՈՐԵՆԵԱՆ

Կը ծախուի Հայ դրամաճառաց քով, եւ մասնաւորապէս Արամեան գրատունն ու Մէրճանը Պաշտասար ազգային դրամաճառանոցը: Կին մէկ ու կէս ֆրանք, Շատ գնողներու համար զեղ կըլայ:

Այս գործնական քերականութեան ուսուցանելու մեթոդը բոլորովն նոր է, եւ մինչեւ ցարդ հրատարակուածներուն վրայ սա առաւելութիւններն ունի, որ հեղինակը՝ ինչպէս յառաջաբանին մէջ կըրէ, փորձառութեամբ կատարելագործած է իւր գրութիւնը: Ասկէց զատ մէջը գրուած բազմաթիւ հրահանգաց մեծ մասը Ս. Գրքէն քաղուած են որով ուսանողը չեն կարծար լուծման եւ թարգմանութեան համար ալ ուրիշ դասադիրք գործածելու:

Ազգ. վարժարանաց պատուարժան տեսուչներուն եւ դասաւարտաց ուղղութիւնը կը հրաւիրենք այս կարեւոր դասագրքին վրայ:

ՏՈՒՄԱՐ ԸՆԾԵՆԵԿԱՆ

1874 — 1875

ԱՌԱՋԻՆ ՆՈՒՐ ՀԱՅ ՏԻՆԱՆՑ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Աւտատարեաց Տ. Սրբուհի Ա. Երեցեանց

Տպարար ի Տփլիս

1874

Այս կարեւոր եւ հմտակց գործը՝ մայրաքաղաքին ամեն Հայ դրամաճառաց քով կը գտնուի: Կին 25 դր:

ԻՆՔԵՆՈՒՆԻԹԻՒՆ

ՆԵՐՔԵՆԻՆ, ՎԵՐՔԵՆԻՆ Ե ՅԱՐՔԵՆԻՆ

ԼԵՐԱՊԵՆԻՆ Ե ԿԵՐԱՊԵՆԻՆ

Հեղինակ

ՍՍՄՈՒՂ ՍՍՄՈՒՂ

Թարգմանաց Գաղղիերէնէ

Հաշկերք ծանօթութեամբ և յաւելուածով

Ս. ԼԵՐԱՊԵՆԻՆ

Ամեն Հայ դրամաճառաց քով կը գտնուի:

Կին կէս արծաթ մէծիտ

ՕՐԵՑՈՅՑ

ՊԱՐԶ

1875 ԹՈՒԱԿԱՆԻՆ

Յորինեալ յերեմիա քահանայէ Խոսեղի

կը ծախուի դրամաճառաց քով ի

Կին 60 փարա: Կեղծանունըն է Մերձ

ճանը փաստըմանի խանի վերնայարկը

թիւ 28:

Վերոյիշեալ անեակը յաճախորդ

դաց համար բաց է ամեն օր ժամը

4 1/2 Կին մինչեւ 6:

Օրացոյցին ընդարձակ տեսակն ալ

ապագայութեան վրայ ըլլալով, մինչեւ

ամառոյ վերջերը պիտի հրատարակուի:

ԻՆԿԱՆ

Աստիքի Շահանէ Նանը աղիդ

խառնէսի տէրիմէնիտէ մէկնուտ

պուրաւան 100.000 դրոյն քէփէյին

պէհեր քէփէյին 20 փարատա թաղիպի

էօհտէսիտէ օլուպ, իրուր բուսինին

երմիս ալթընը քէփէյինպիհ կիւնիւ

թէքար միւղայէտէսի պիլ իճրա դա

րարը գաթիկի վերիլէճէյինտէն, ֆի

եալթընը գամմէնալ թաղիպ օլանլարըն

եւիմի մէկքիւրտէ Տարի Շուրայի տա

քէփէյին կէլէլէլէլ:

23 Իլու 1874 Պապը Սէրասքէրի

Մալիպալը ամիքէտէ միւսթալա

տէմ պիլթիւմէ աշըր վէ թապլաքեար

լէր իշին օն իքի գալէմ էլպիտէ:

Հաթապ, չէք 7000 պէհէյին չէ

քէփէյին 17 դրու:

Քէփիւր, դրոյն 100.000 պէհէյին

100 դրոյն 31 դրու:

Ասաքիլի Շահանէ իշին լուղումի

օլան պալատէ մուրաքքամ էշեա ֆի:

